ՍՈՆՅԱ ԱՊՐԵՍՈՎԱ
ԵՐՊԼՀ

ՆՈՆՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՀԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ Դ.ԴԵԼԻԼԼՈՅԻ «ԸՆԿՆՈՂ ՄԱՐԴԸ» ՎԵՊՈՒՄ

Նոնսելեկցիայի և դրանից բխող դրվագայնության գաղափարն առավել մանրամասն քննել է հոլանդացի հետազոտող Դ. Ֆոկկեման, ով պնդում է, որ պոստմոդեռնիստական աշխարհընկալման գլխավոր առանձնահատկություններից է ցանկացած տիպի «բնածին կամ սոցիալական աստիճանակարգայնության» գոյության հնարավորության բացառումը: Գիտնականն այստեղից դուրս է բերում, այսպես կոչված, «ոչ աստիճանակարգայնության սկզբունքը», որն ընկած է բոլոր պոստմոդեռնիստական տեքստերի կառուցման և ձևավորման հիմքում: Սա հանգեցնում է հենց գրական հաղորդակցական իրավիճակի վերաիմաստավորման[1]:

Նոնսելեկցիան հեղինակի համար նշանակում է «տեքստի ստեղծման ընթացքում» լեզվաբանական կամ այլ տեսակի տարրերի կանխամտածված օգտագործման մերժում, իսկ ընթերցողի համար՝ «տեքստի կապակցված վերարտադրման» ցանկացած հնարավորության բացառում:

Իրականում նոնսելեկցիան պոստմոդեռնիստական տեքստի կառուցման հիմնարար սկզբունքն է, որը հանդես է գալիս որպես տարբեր երևույթների և տարբեր մակարդակների վրա գտնվող խնդիրների սինթեզ, ինչպես ամենա ոչ էական, այնպես էլ չափազանց խնդրահարույց երևույթների կարևորության հավասարեցում, պատճառների և հետևանքների վերադասավորություն, ամեն ինչ հավասարապես կարևոր և հավասարապես արժեքավոր է քաոսային և հարաբերական աշխարհում, որտեղ արժեզրկված է ցանկացած երևույթ[2]:

Ամերիկացի գրող Դոն ԴեԼիլլոյի (1936) «Ընկնող մարդը» (Falling

---

* Հոդվածն ընդունվել է տպագրության 13.02.2019:

1. Киреева.Н. Постмодернизм в зарубежной литературе. М.2004.С.198.

2. Ильин И.П. Постмодернизм от истоков до конца столетия: эволюция научного мифа.Нонселекция http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/Ilin_Mod/17.php

Man, 2007) վեպում կարելի է գտնել այս պնդումներից բացառապես յուրաքանչյուրը: Վեպում իրենց կարևորությամբ հավասարվում են բոլոր երևույթները, իրերը, մարդիկ, պատմական իրադարձությունները: Չկա որևիցե մի փաստի նախապատվություն կամ հատուկ ընդգծվածություն, բոլոր խնդիրները միահյուսված են, բխում են մեկը մյուսից և դրվագ առ դրվագ հառնում ընթերցողի առջև:

«Նա կարդացել էր ամեն բան, ինչ գրում էին ահաբեկչության մասին: Մտածում էր իր հոր մասին: Նա պատկերացնում էր՝ ինչպես է հայրը շարժասանդուղքով իջնում ներքև, ինչպես օդանավակայանում: Քեյթը դադարել էր սափրվել, ինչ իմանաս, ինչ է դա նշանակում»[3]:

Այս կտրտված արտահայտություններից և տարբեր հարթություններիր վրա գտնվող խնդիրներից մեկ ընդհանուր պատկեր է կազմվում՝ կյանք, որը միայն մեկ մարդու է պատկանում, և այդ քաոսային իրականությունը հնարավոր չէ նկարագրել այլ կերպ: Եվ այստեղ իրենց կարևորությամբ հավասարվում են, օրինակ, թե՛ ահաբեկչությունը, թե՛ հերոսուհու՝ հոր հետ կապված ապրումները, թե՛ ամուսնու հետ փոխհարաբերությունները, որոնք, որքան էլ տարբեր են իրենց բնույթով, միաժամանակ հավասարազոր են մեկ մարդու կյանքի վրա ունեցած ազդեցությամբ: Եվ իրականում, որքան էլ ահաբեկչությունը սարսափելի գլոբալ խնդիր լինի, ի վերջո այն յուրաքանչյուրի վրա յուրովի է անդրադառնում, և հենց սա է այն կարևորագույն հարցը, որ բարձրացնում է ԴեԼիլլոն: Իր հարցազրույցներից մեկում հեղինակը խոստովանել է, որ իր նպատակն էր ցույց տալ, թե ինչպես են նման իրադարձությունները փոխում մարդկանց կյանքը. տվյալ պարագայում Քեյթ-Լիանա զույգը վերամիավորվում է, իսկ մյուս զույգը՝ Նինանու Մարտինը՝ բաժանվում[4]:

Նշենք նաև, որ նոնսելեկցիայի կանոնն արտացոլում է կանխամտածված պատմողական քաոսի էֆեկտի, դրվագային դիսկուրսի ստեղծման տարբեր միջոցները: Այս մոտեցումը նկատվում է բոլոր մակարդակներում: Օրինակ, պոստմոդեռնիստական տեքստի շարահյուսությունը ցույց է տալիս բոլոր ոճական միավորների համարժեքությունը: Արտահայտությունների մակարդակի վրա նախադասությունը կարող է մինչև վերջ ձևակերպված չլինել քերականական օրենքների տեսանկյու-

3 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.72

4 Amend Ch. Diez G.. I don't know America anymore. Interview with DeLillo Die Zeit.2007

նից, և որպեսզի արտահայտությունն իմաստ ձեռք բերի, այն պետք է լրացվի ընթերցողի կողմից քարացած արտահայտությունների միջոցով:

Տեքստային մակարդակի վրա նոնսելեկցիան իրենից ներկայացնում է տարբեր մեթոդների միախառնում, որոնք ուղղված են տեքստի կազմակերպված բնույթի փլուզմանը: Օրինակ, որևէ երևույթ չափազանց հաճախ կիրառելու մեթոդը, այսինքն՝ տեքստի ծանրաբեռնվածությունն ավելորդ տեղեկատվությամբ, որը տեղեկատվական աղմուկի էֆեկտ է ստեղծում, և դժվարացնում է տեքստի ամբողջական ընկալումը:

«Նա ոչ մի կատու էլ չուներ, միայն հագուստ: Որոշ բաներ ճամպրուկի մեջ դրեց՝ մի քանի վերնաշապիկ, մի քանի զույգ տաբատ, լեռնադահուկային կոշիկներ Շվեյցարիայից, մնացածն իրեն պետք չէ: Որոշ իրեր և շվեցարական կոշիկներ. կոշիկները կարևոր են, և մեկ էլ խաղաքարտի սեղանն է կարևոր, բայց այլևս պետք չէ, խաղացողներից երկուսը մահացել են, մեկը՝ վիրավորվել: Մի ճամպրուկ և անձնագիր, չեկային գրքույկ, ծննդյան վկայական և ևս ինչ-որ թղթեր, փաստաթղթեր՝ տիրոջ անձը հաստատող: Նա կանգնած նայում էր, միայնություն էր զգում՝ նյութականացված, շոշափելի»[5]:

Բառերի կտրտվածությունը, քանակն ու դրանց կրկնությունը տեքստում ստեղծում են վերոնշյալ ծանրաբեռնվածության էֆեկտը:

Հաճախ դրվագայնությունը պոստմոդեռնիստական տեքստերում կարող է դրսևորվել «կեղծ փաստագրականությամբ»՝ իրականության չմեկնաբանված կտորներով, ազդերի տեքստերով, փոստային բացիկներով, փողոցային կարգախոսներով, պատերի վրա գրառումներով, որոնք կոլաժային տեխնիկայի միջոցով ներմուծվում են տեքստի մեջ «հում» վիճակում, չմիջնորդավորված ձևով: Այս տեխնիկան իրականության պատկերման յուրօրինակ, ազդեցիկ ձև է դառնում: Ընթերցողին ստիպում է քողարկված իմաստներ փնտրել, ինչ-որ խորհրդանիշներ տեսնել, օրինակ, փողոցային պաստառի բովանդակության մեջ:

«Ոտքերի տակ ջարդուփշուր եղած իրերի բեկորներ էր զգում, շուրջբոլորն ամեն ինչ լողում էր, մարդիկ վազում էին, իրերը՝ թռչում: Նա քայլում էր «Ավտոկայանում առանց խնդրի», «Նախաճաշեր. հատուկ առաջարկ» և «Կոստյումներ. երեք հատն ավելի էժան» ցուցապաստառների կողքով, իսկ մյուսներն առաջ էին անցնում իրենից՝ գցելով փողերն ու կոշիկները»[6]:

5 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.56.
6 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.3.

Նմանատիպ պաստառներն ու ցուցանակներն ավելի խորհրդանշական են թվում, երբ շուրջբոլորն ավերածություն է, կյանքը կանգ է առել, և պատկերացում անգամ չունես՝ ինչպես շարժվել առաջ: Այս դրվագն օգտագործվում է նկարագրելու համար ինքնաթիռների հարվածից հետո տեղի ունեցող իրադարձությունների առաջին մի քանի րոպեները, մարդկային խուճապը, սակայն դա մատուցվում է պոստմոդեռնիստական մտածողությանը հատուկ ձևով, երբ ցանկացած իր, փաստ, պաստառ կամ հասարակ բաժակ իր իմաստն է ձեռք բերում նման իրավիճակում:

ԴեԼիլլոյի վեպի հերոսուհիներից մեկն ահաբեկչության օրը բացիկ է ստանում, որի արտաքին կողմում պատկերված է Պերսի Բիշի Շելլիի «Իսլամի ապստամբությունը» գրքի շապիկը:

««Իսլամի ապստամբությունը»: ... Սովորական զուգադիպություն. բայց ոչ, արտասովոր, հենց այսօ՞ր պիտի ստանայի այն բացիկը, որի վրա նման գրառում կա»[7]:

Հարկ է նշել, որ նույն տեխնիկայով է հագեցած նաև ֆրանսիացի գրող Ֆրեդերիկ Բեգբեդերի՝ նյույորքյան դեպքերին նվիրված «Windows on the World» ստեղծագործությունը, որում մեծ ուշադրություն է դարձվում տեսողական ընկալմանը: Նման իրավիճակներում բազմաթիվ պատահականություններ, թվեր, անուններ, գրքերի վերնագրեր սկսում են ինչ-որ չարագուշակ բան թվալ մարդկանց:

«Ես ինքնամոռաց հեռախոսով 911 եմ հավաքում, որպեսզի նախազգուշացնեմ փրկարարներին: Ջերին հարցնում է, թե ինչու եմ հեռախոսի վրա անընդհատ այսօրվա ամսաթիվը հավաքում՝ 911, 911, 911, Nine Eleven:

...Սա լրիվ պատահականություն է, սակայն սնահավատ մարդիկ կարծում են, որ սրանք գաղտնի նշաններ են: Օրինակ, հենց հիմա որևէ պարզամիտ մեկը կարող էր մտածել, որ սա ծածկագիր է, այն, որ այսօրվա ամսաթիվը համընկնում է ոստիկանության փրկարար ծառայության հեռախոսահամարի հետ: Որ ինչ-որ մեկը փորձում էր նախազգուշացնել մեզ: Բայց այս ամենն իհարկե, տխմարություն է, պարզապես պատահականություն»[8]:

Դրվագայնության և նոնսելեկցիայի հայեցակարգերի շարունա-

7 Նույն տեղում էջ 18:

8 Бегбедер Ф. Windows on the world. М.2010.С.54.

կությունը կարելի է տեսնել պոստմոդեռնիստական զգայունության հասկացության մեջ: Հետևաբար, այստեղ պետք է անդրադառնալ հենց այս խնդրին: Պոստմոդեռնիստական զգայունություն հայեցակարգի տակ փիլիսոփաներն ու մշակութաբանները երկու տեսակի երևույթներ են հասկանում: Այս հայեցակարգի առաջին բաղադրիչ են համարում աշխարհի ընկալումը որպես քաոս, որտեղ բացակայում են արժեքների չափանիշները և իմաստային կողմնորոշումները, աշխարհը, որը նշանավորված է, ըստ Հասանի, նախկինում գոյություն ունեցող բոլոր արժեքների նկատմամբ «հավատի ձգնաժամով»: Այս «նիհիլիզմի դարաշրջանի» առաջամարտիկներից է համարվում Ֆ. Նիցշեն՝ իր «Կամ քառիշխանություն» աշխատությունով: Նիցշեից մոտ հարյուր տարի անց Հասանը նշում է. «Մեզանից շատերը ցավով են ընդունում, որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ Աստված, Թագավոր, Մարդ, Գիտակցություն, Պատմություն և Պետություն, որոնք մի ժամանակ հայտնվեցին, այնուհետև մոռացության մատնվեցին որպես անպարտելի իշխանության սկզբունքներ, և անգամ լեզուն՝ մեր ինտելեկտուալ վերնախավի ամենակրտսեր Աստվածությունը, գտնվում է ամբողջովին իշխանության կորստի վտանգի առջև, պարզապես մարդկանց հույսերը չարդարացրած ևս մեկ Աստված»[9]:

Փիլիսոփա, պոստմոդեռնիստ ժորժ Բատայը գրում է. «Ես հեռացա այն հասկացություններից, որոնք սահմանափակում էին ինձ... Լեզուն չարդարացրեց իմ հույսերը... մեկ այլ բան էր արտահայտում, ոչ այն, ինչ ես զգում էի, քանի որ այն, ինչ զգում էի որոշակի պահին, ինքնաբուխ էր... Լեզուն նահանջում է, քանի որ ստեղծված է նախադասություններից, որոնք հանդես են գալիս նմանության անունից»[10]:

«Սպիտակամորթ սև: Խնդրեմ, ևս մեկ օրինակ նրա, որ բառերի մեջ ճշմարտություն չկա, իսկ սեփական ռասայից ոչ մի տեղ չես փախչի: Բայց նրա համար էական են միայն այն բառերը, որոնք նա է արտաբերում և այսուհետ արտաբերելու է»[11]: Այս օրինակը կրկին ապացուցում է պոստմոդեռնիստների հիասթափության զգացումը, հիասթափություն անգամ լեզվից, դրա անկարողության փաստում, որը միայն կարող է որպես խաղ օգտագործվել և միայն միջոց դառնալ որևէ

9. Ильин И.П.Постмодернизм и прочее. Постмудернистская чувствительность. http://lib.web-malina.com/getbook.php?bid=2120&page=81.

10 Затонский Д. Постмодернизм в историческом интерьере. М. 1996. С. 185.

11 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.87.

երևույթ նկարագրելու համար: Լեզուն դադարում է ընկալվել որպես իրականության փոխանցման միջոց, այն կարող է միայն գործիք լինել, քարոզչության միջոց ծառայել, բայց ոչ երբեք ճշմարտությունն ասել:

Գեղարվեստական գիտակցության մեջ պոստմոդեռնիստական զգայունության այս ձևը հանգեցրեց այն համոզմունքին, կարծում է Դ. Ֆոկեման, որ «աշխարհի մոդելը» կառուցելու ցանկացած փորձ պոստմոդեռնիստների տեսանկյունից բացարձակապես անիմաստ է:

Եթե պոստմոդեռնիստներն անգամ հնարավոր համարում են աշխարհի որոշակի մոդելի առկայության հանգամանքը, ապա այն կարող է հիմնված լինել միայն այդ աշխարհը կառուցող տարրերի «հավասար ահնարավորության» և «հավասարարժեքայնության» վրա:

Փաստացիորեն ստեղծագործության մակարդակում պոստմոդեռնիստական աշխարհայացքը արտահայտվում է կյանքի քաոսը սկզբունքայնորեն դրվագային պատմվածի արհեստականորեն կազմակերպված քաոսի միջոցով վերստեղծելու ձգտումով: Համաձայն անգլիացի գիտնական Դ. Լոջի՝ նմանատիպ տեքստերի հիմնական հատկությունը կայանում է նրանում, որ ստեղծագործության մակարդակի վրա ընթերցողի մոտ «անվստահության» զգացում է առաջանում: Հենց այս աշխարհընկալումն էլ ստիպում է ԴեԼիլլոյին ահաբեկչության հետ կապված ողջ ապրումները, մարդկանց հետ ահաբեկչական կյանքը, փոխհարաբերությունները, անգամ հավատի հարցերը, ահաբեկիչների մասին պատկերացումները նկարագրել Ալցհեյմերով հիվանդների խոսքի միջոցով: Սա լավագույնս արտահայտում է այն անկարողության զգացումը, շփոթմունքը, ցնցումը, որ համակում է մարդկանց նման իրադարձություններից հետո: Փաստացիորեն Ալցհեյմերով հիվանդների մոտ հենց նույն հոգեվիճակն է լինում ամեն անգամ, երբ հիշողությունը դավաճանում է՝ ինքնատիրապետման բացակայություն, անկարողություն, մեկ քայլ առաջ գնալու անհամարձակություն, վախ:

«Ռոզելեն Ս.-ի հետ դժբախտություն էր պատահել, վերադարձել էր վաղ մանկական տարիքի վախը: Նա չէր կարողանում հիշել՝ որտեղ է ապրում: Կանգնած էր վերգետնյա ճանապարհների խաչմերուկում, հուսահատությունը համակել էր նրան, զգում էր, որ կտրված է ամեն ինչից: Փնտրում էր որևէ պաստառ, փողոցի անվամբ ցուցանակ, գոնե ինչ-որ հուշող բան: Աշխարհը նահանջում էր իրենից, ծանոթն անճանաչելի էր դառնում: Նա արդեն կորցնում էր գիտակցության հստակու-

թյունը, իրերը տարբերելու ունակությունը: Նա չէր մոլորվել, ավելի շուտ կոտրվել էր, հանգչել: Շուրջբոլորը միայն լռություն և հեռուներ»[12]*:*

Ալցհեյմերով տառապող այս աղջկա հոգեվիճակը կարելի է նույնացնել երկնաքերներից հրաշքով փրկված մարդու ապրումների հետ, ով նույնպես մի պահ կորցնում է ժամանակի ու տարածության զգացողությունը, փորձում է կառչել ամեն մի պաստառից, ցուցանակից, որը կօգնի նրան վերադառնալ իրականություն:

«Ներսում՝ այնտեղ, որտեղ պետք է լիներ իր «ԵՍ»-ը, ամեն ինչ մեռել էր, դեպի հեռուներ էր ներքաշվել: Իսկ շուրջբոլորը ինչ-որ բան էր կատարվում: Բեկորների սարի տակ հազիվ տեսանելի է մեքենան, ապակիները՝ ջարդուփշուր վիճակում, դուրս է ցայտում աղմուկը. Ռադիոձայները ճգնում են դուրս գալ ավերակների միջից: Կամրջի վրա կոշիկներ. պայուսակներ, նոութբուքեր էին ընկած, մայթին մի տղամարդ էր նստած և արյուն էր թքում: Իր կողքով թղթե բաժակներ էին անցնում թոչկոտելով-տարօրինակ էր...»[13]*:*

Սա հենց պոստմոդեռնիստներին բնորոշ աշխարհի զգայական ընկալումն է, որը ստիպում է նրանց դուրս գալ ավանդական կաղապարներից և առավել տպավորիչ միջոցներով արտահայտել ստեղծագործության մեջ բարձրացվելիք խնդիրները, հույզերը, ապրումները: Այս գեղարվեստական հնարի կիրառումը արտահայտում է նաև Հասանի կողմից քննարկվող անգամ լեզվի հանդեպ հավատի կորուստը: Ալցհեյմերով հիվանդները խոսում են կտրտված, սխալ քերականական վերջավորություններով, սխալ շարադասությամբ, բայց որոնց խոսքն ավելի ազդեցիկ է և առավել ընկալելի, քան հստակ շարադրված միտքը:

«- Աստված ասում է. «Թող որ լինի այսպես», և լինում է:

- Այս ամենից հետո ես այլևս չեմ հարգում Աստծուն:

- Մենք նստում ու լսում ենք, իսկ Աստված մեզ ինչ-որ բան ասում է, կամ ոչինչ չի ասում:

- Գնում եմ փողոցով, գնում եմ մազերս կտրելու: Մեկ էլ ինչ-որ մեկը ընդառաջ է վազում:

- Ես զուգարանում էի նստած: Հետո ինքս ինձ անիծեցի: Մարդիկ հարցնում էին. «Իսկ դուք ուր էիք այդ ժամանակ»:

Ես նրանց ոչինչ չեմ ասում:

12 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.67.

13 DeLillo D. The Falling Man. NY.2007.P.2.

- Լավ իսկ այն մարդիկ, ում Աստված փրկել է: Իրենք ինչ է՝ զոհվածներից ավելի արդա՞ր են:

- Հարցնելը մեր գործը չէ: Մենք չենք հարցնում:

- Աֆրիկայում նորածինները միլիոններով են մահանում, իսկ մենք, անգամ մի էլ հարցրու:

- Ես մտածեցի՝ պատերազմ: Ես մտածեցի, պատերազմ,- ասաց Աննան»[14]*:*

Բանալի բառեր. - պոստմոդեռնիզմ, նոնսելեկցիա, դրվագայնություն, պոստմոդեռնիստական զգայունություն:

СОНЯ АПРЕСОВА

Принцип нонселекции и постмодернистская чувствительность в романе Д.Делилло "Падающий"

Резюме

В статье рассматривается роман американского писателя Д.Делилло "Падающий" с точки зрения наличия в нем принципа нонселекции и постмодернистской чувствительности.

Ключевые слова: постмодернизм, невыбор, эпилепсия, постмодернистская чувствительность

SONYA APRESOVA

The principle of nonselection and the Postmodern sensibility in the novel "Falling Man" by D.DeLillo

Summery

The article discusses the principle of nonselection and the Postmodern sensibility in the novel "Falling Man" by D.DeLillo.

Keywords: postmodernism, nonselection, epilepsy, postmodernist sensitivity